

ՋՈՒՐՐԱՆ ԽԱՆԻԼ ՋՈՒՐՐԱՆԻ ԱՐՁԱԿ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ

20-րդ դարի սկզբին արաբական գրականություն մուտք գործեց և իր հաստատուն տեղը զբաղեցրեց «ջախջախված թևերով այս բանաստեղծը», ինչպես Ջուրրանի մասին գրել է լիբանանահայ արևելագետ Գ.Ասթարճեանը: Ջուրրանին բոլորն են համարում մեծանուն փիլիսոփա, արծակագիր և բանաստեղծ: Սակայն ոչ բոլորն են, ավելի ճիշտ, ոչ բոլոր գրականագետներն են անրադարձել նրա չափածո բանաստեղծական գործունեությանը:

Ծնվելով արաբ ժողովրդի և գրականության համար ճակատագրական դարաշրջանում Ջուրրան Խալիլ Ջուրրանը դեռևս պատանի հիասթափություն ապրեց իշխող հասարակարգից, մարդկանց ոչ մարդկային հարաբերություններից, դժբախտ ու թշվառ զանգվածների հետ ստրկատիրական վերաբերմունքից: Նա դարձավ ազատության հանդուգն հեղափոխական և պախարակելով հիմը՝ «մեխած-փտածը» գրեց «Ընդվզող հոգիները» (1917-1914): Երիտասարդության վաղ շրջանում սերն ու ճակատագրի դաժան խաղը ստիպեցին նրան գրել «Ջախախված թևեր» վեպը (1918): Իսկ երբ հանդիպեց Սելմեյին, հասկացավ, թե որն է իսկական սերը: Սակայն այստեղ էլ ճակատագիրը կրկին որոշել էր փորձել բանաստեղծի դիմացկունությունը: Սելմեյի անակնկալ մահը շանթահարեց նրան և մխիթարության ճամփա որոնեց «Արցունք ու Ժպիտ» (1913) վեպը գրելով: Ինչպես իր ժամանակին գրել է դոքտոր Գ.Ասթարճեանը Ջուրրանի այս վեպը արաբ արդի գրականության և քերթողական արվեստի մեջ մի նոր ուղի բացելով, նոր երգեր երգեց: Ջուրրանը չնայած կյանքի հարվածներին երբեք չփոխեց իր սրտի վիշտը ուրիշ ժպիտի հետ, որովհետև, ինչպես ինքն է ասում «արցունքը կոչված է հոգին վեր բարձրացնելու և տառապանքը թեթևացնելու միայն»:

Ջուրրան Խալիլ Ջուրրանի ստեղծագործությունների գլուխգործոց համարվում է «Մարգարեն», որը նրան համաշխարհային փառքի արժանացրեց: Այս ստեղծագործությունը գրվել է անգլերեն լեզվով և հավանության է արժանացել բազմաթիվ գրաքննադատների կողմից: Ջուրրանին համարում են արաբական քնարերգության առաջնորդ: Արաբական հին ու նոր գրականության ուսուչից Հաննա ալ-Ֆախուրին գրել է. «Ջուրրանի ստեղծագործությունները քաղցրահնչյուն կարկաչով հեզասահ վճիտ աղբյուրի նման են, դյուրում են իրենց երաժշտականությամբ, մարդու աչք են հիացնում իրենց ծիածանի երանգներով և նշանակության ու իմաստի բյուրեղականությամբ, և

այս հատկություններով հանդիսացավ գաղթաշխարհի արաբ գրականության առաջնորդը¹։ Իսկ մեծանուն արևելագետ Ի.Ս.Ֆիլշտինսկին գրել է, որ Ջուբրանը իր քնարների վրա բուլղորվին նոր եղանակ հորինեց, որով արաբ քնարերգության առաջնորդը դարձավ։

Ջուբրանի ստեղծագործությունները զգայական են ու պատկերավոր, բառապաշարը հարուստ է, իր ստեղծագործությունները սեփական ապրումների արդյունք են։ Նա գրում է. «Յասնում է գիշերը և խավարը վարագուրում է միջավայրը, ծաղիկը ամփոփելով թավշյա թերթիկները՝ նիրհում է իղծերի թոփուբոհի մեջ. կբացվի արշալույսը, կծագի արևը վեհափառ և ծաղիկը արթնանալով կհամբուրի նրա առաջին ճառագայթները՝ ցանկությունով ու կյանքի հազարումեկ տենչանքով լի. ծաղիկների կյանքը իղծ է ու ժպիտ»²։ Նա լավատես էր։ Գիշերվա թեման հատկապես հոգեհարազատ է բանաստեղծին։ Ահա մի քանի տող նրա «Գիշերը» արձակ բանաստեղծությունից Գ. Ասթարճեանի թարգմանությամբ. Ո՛վ գիշեր, գիշեր սիրատոջորներու, բանաստեղծ-գուսաններու, ո՛վ գիշեր ուրուականներու, գիշեր հոգիներու, երազներու, իղծերու ու մղձավանջներու։

«Սարսափի թուրը մեջքդ կապած, լուսինը գլխուդ պսակ դրած, կյանքի խորքը բյուր աչքերով դիտելով, մահվան ու անեության ահեղ ծայները բյուր ականջներով ունկնդրելով, մայրամուտի գաճաճ ամպերուն և արշալույսի առինքնող յաւերժահարսերուն միջեւ կանգնած, տիեզերքը իր իշխանութեան տակ վարագույրին տակ պահող ո՛վ հսկայ»։

Ջուբրանի այս բանաստեղծությունը նման է երկրպագության, աղոթքի։ Նա վախենում է գիշերից, բայց համարում է հուսատու «...անհունության վեհությունը մեզի իմացնող յոյսն ես. իսկ ցերեկը՝ չափ ու կշիռի աշխարհին մեջ խաբխափող կույրերի նման անորաշության մեջ ապրեցնող հուսատուն ես»։ Բանաստեղծը ավելի շատ է սիրում գիշերը, քան ցերեկը, որովհետև «ցերեկը իր հազար ու մեկ ազդականերովը խաղի ու սաղորանքներու ծուղակին մեջ ձգած հոգիները չարչարող թոհն ու բոհն է»։

Այս ամենը հիշեցնում է հեթանոսական մի ծիսակարգ, որը վերաբերվում է գիշերվա պաշտամունքին, սակայն Ջուբրանի քրիստոնյա լինելը նույնիսկ չի կարելի կասկածի տակ առնել, նա չափազանց շատ էր սիրում Քրիստոսին («Սարգարեն» (1920), «Յիսուս որդի մարդոյ»)։ Սակայն վերադառնանք «Գիշերվան»։ Ընդհանրապես Ջուբրանի ստեղծագործությունները Ֆ. Դոստոևսկու ստեղծագործությունների նման բերում են կատարյալի։ Այս ստեղծագործության մեջ էլ բանաստեղծի հոգին ի վերջո վեր է ելնում և խնդրում է

¹ Ханна ал-Фахури, История арабской литературы, т.2, М.1961, стр. 451.

² Գ.Ասթարճեան, «Պատմություն արաբական գրականութեան և մշակոյթին», Բեյրութ 1970թ. էջ 595։

գիշերվանից ուղեղի մեջ հորդացնել օգտաշատ գաղափարները՝ ավել տանելով «հոն կուտակված խոտերն ու ցախերը»: Ջուբրանի հոգին նման է գիշերվան, բայց ոչ թե խավար է գիշերվա պես, այլ գաղտնիքներով, քնքշանքով ու խոսույն լռությամբ լի: Երկարատև դեգերումներից հետո վերջապես տեղի է ունենում Բանաստեղծի և Գիշերվա հանդիպումը. «Եվ, ո՛վ գիշեր, հոն իրարու հանդիպեցանք ու զիրար տեսանք, անառարկելի դիրքիդ մեջ զքեզ հայր ընդունեցի եւ երազներուս մեջ քեզ եղայ որդի եւ այսպիսով մէջերմիս գոյությիւն ունեցող սեւաթույր վարագոյրը պատռուեցաւ. մեր երեսներուն վրայ գոյություն ունեցող քողը աներեւութացաւ. նպատակներիդ ու խորհուրդներիդ հասկացայ և քեզի հայտնեցի իմ իղծերս ու գաղտնքներս, որպէսզի սարսափազդու լռութենէն յառաջ եկող քաղցրանուազ մեղեդիներու ունկնդիր ըլլամ եւ ահարկությունդ ինձի համար ապահովութեան գրաւական մը ըլլայ»:

Ջուբրան խալիլ Ջուբրանը ընդունում էր, որ մարդը բնության հարազատ ծնունդն է և ուր ինչ որ առումով նման է նրան: Ջուբրանը իր ստեղծագործություններով փնտրում էր լավն ու օգտակարը, արդարն ու ճշմարիտը: Եվ այս «Գիշերվա» մեջ էլ նա ազնիվ գտնվեց ինքն իր նկատմամբ, ինչն ամենակարևորն է կյանքում և ճանաչեց ինքն իրեն. «Ես միշտ քեզի նման եմ, ո՛վ գիշեր, այգաբաց չունեմ մինչև վերջը կեանքիս»: Այսպիսով թվում է թե բանաստեղծությունը հոռետեսական ավարտ ունի, սակայն իր առջև դրված խնդիրը նա կատարում է հիանալի. մարդը պետք է ճանաչի ինքն իրեն, որքան էլ, որ դա դժվար լինի և դրանից հետո միայն կարելի ապրել ազատ:

Շատ գործեր են նվիրված գիշերվան, սակայն ահա այս մեկը, որը արդեն չափածո գրվածք է, ավելի թեթև է, երազական, զգացմունքային: Եթե վերը բերված «Գիշերը» իրատեսական տարրեր էր պարունակում իր մեջ, ապա սա՝ «Գիշերվա լռությունը», կարելի է ռոմանտիկ անվանել.

سكون الليل

تخفى الاحلام
ترصد الايام

سكن الليل وفي ثوب السكون
وسعى البدر وللبدن عيون

كرمة العشاق
حرقة الاشواق

فتعالى يا بنّة الحقل نزور
علنا نطفئ بذياك العصور

يسكب الالحان
نسمة الريحان

اسمعي الليل ما بين الحقول
في فضاء تفتت فيه التلون

تكتم الاخبار
يحجب الاسرار

لا تخافي يا فتاتي فالتجوم
في تلك الكروم وضباب الليل

Գիշերվա լռությունը

*Լռեց գիշերը. և լռության մեջ երազներն ելան,
Սահեց լուսինը, լուսնի աչքերում օրերը անցան:*

*Արի իմ աղջիկ, արտերը ոսկի՝ բաղը սիրահարի,
Խմենք հյութերը նրա՝ ծարավը հագեցնի:*

*Լսիր սոխակին այն, որ դաշտերը լցնում էերգով,
Սիրտը շնչում է բլուրների ռեհանի հոտով:*

*Մի վախենար, ո՛վ աղջիկ աստղերից, նրանք լուրերն են պահպանում,
Գիշերվա մշուշն այդ այգիներում գաղտնիքն է ծածկում:*

(թարգմանությունը Շ. Կարապետյանի)

Այսպիսով այս բանաստեղծություններում Ջուբրանը վառ երևակայությամբ, միստիկական հոգով և կրակոտ զգացմունքներով արտահայտում է իր ապրումները: Իր տաղանդի ուժով Ջուբրանը գիշերը կարողանում էր նկարել ոչ միայն վրձնով (նա նաև նկարիչ էր), այլև պատկերավոր բառերով:

Իր կարճատև քառսնամյա կյանքը բավական էր, որ Ջուբրանը դառնար Լիբանանի թերևս խոշորագույն փիլիսոփան: Նա նաև պատմելու մեծ վարպետ էր և հաճախ էր դասախոսություններով ելույթ ունենում տարբեր հաստատություններում: Մեծ մարդասերի կյանքը ընդհատվեց 1931 թվականին Բոստոնում, հետո նրա մարմինը տեղափողեցին հայրենիք և թաղեցին իր ծննդավայրում: Նա ստեղծագործել է թե՛ արաբերեն և թե՛ անգլերեն լեզուներով, և սիրված ու ընդունված է բազմաթիվ անգլախոս երկրներում և ոչ միայն:

Օգտագործված գրականություն.

1. Գ.Ասբարճեան, «Պատմություն արաբական գրականութեան և մշակոյթին», Բեյրութ 1970թ.
2. Долинина А.А., Очерки истории арабской литературы нового времени, Египет и Сирия 1870-1914, М.1968.
3. Ханна ал-Фахури, История арабской литературы, т.2, М.1961.
4. Крымский А.Е., История новой арабской литературы, (XIX-начало-XX вв.), М. 1971.
5. Արաբական գրականության դասագիրք, արաբերեն լեզվով (1998-1999թթ):